

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺ. Տ. ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
(1885—1969)

1969 թվականի նոյեմբերի 16-ին Թբիլիսիում, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, 84 տարեկան հասակում վախճանվեց արժ. տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանը:

Հանգուցյալը ծնվել է 1885 թվականի փետրվարի 17-ին Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում: Նա սովորել և ավարտել է Շուշիի հայոց թեմական դպրոցը: 1917 թվականի մայիսի 19-ին տ. Վահան եպիսկոպոս Մելոեցու կողմից ձեռնադրվել է քահանա և պաշտոնավարել՝ իր ծննդավայրում:

1920 թվականին տ. Վահան քահանան տեղափոխվում է Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ քաղաքը, որտեղ պաշտոնավարում է 20 տարի: Ապա քահանայագործում է Օրջոնիկիձեում, այնուհետև՝ Թբիլիսիում:

Արժ. տ. Վահան քահանան իր կյանքի երկար տարիները պաշտոնավարել է նաև Կիրովաբադի հայոց եկեղեցում և ապա Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

Հանգուցյալը երկարատև և բարեջան քահանայագործության առիթով գնահատվել է լուսահոգի Տ. Գևորգ Զ Վեհափառ Հայրապետից և արժանացել ավագության պատվի և ստացել ծաղկյա փիլոն կրելու իրավունք՝ Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի կողմից:

Արժ. տ. Վահան ավագ քհն. Գրիգորյանը սիրվել է նաև իր հավատացյալ ժողովրդի կողմից իբր բարի, անձնվեր և պարտաճանաչ հոգևորական:

Տեր հայրը 1962 թ. սեպտեմբերի 1-ից անցել է հանգստյան թոշակի:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ցուցաբերած իր հայրենասիրական գործունեության համար պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար» մեդալով:

Հանգիստ իր ոսկորներին: